ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Խզմալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Սանկտ Պետերբուրգ (ՌԴ)
2019 թվականի նոյեմբերի 14-16-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ՌԴ մշակույթի նախարարություն

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն սանկտպետերբուրգյան 8-րդ միջազգային մշակութային համաժողովին: Համաժողովը հանդիսանում է մշակույթի ոլորտում բաց երկխոսության, փորձի փոխանակման, միջազգային համագործակցության զարգացման և խնդիրների քննարկման բացառիկ հարթակ: Սանկտպետերբուրգյան 8-րդ միջազգային մշակութային համաժողովին իմ ղեկավարած հայաստանյան պատվիրակության մեջ ընդգրկված էին Սյուզաննա Խոջամիրյանը (Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանի տնօրեն), Սառա Նալբանդյանը (Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի պրոռեկտոր), Մարիաննա Մխիթարյանը (Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնի տնօրեն), Սուրեն Սաֆարյանը (Հայաստանի նկարիչների միության նախագահ) և Էռնա Ռևազովան (Միջոցառման համադրող): Ֆորումի շրջանակներում Սանկտ Պետերբուրգի Սուրբ Եկատերինա Հայ առաքելական եկեղեցու «Վերնատուն» մշակութային կենտրոնում կայացավ «Հպվել Հայաստանին» խորագրով ցուցահանդեսը, որն իրականացվում է «Արվեստ առանց սահմանների» ծրագրի շրջանակներում:

Ցուցահանդեսին ներկայացվել է 8 ռուս արվեստագետների (Լատիֆ Կազբեկով,Կսենիա Զավռազովա,Նադեժդա Նիկոլաևա,Սերգեյ Մոյիսեև,Անդրեյ Ֆիլիպով,Արսենի Բաղդասարյան,Տատիանա Չիկովա,Անաստասիա Բազանովա) աշխատանքները, ովքեր սեպտեմբեր ամսին մասնակցել էին «Արվեստ առանց սահմանների» պլեներին՝ Հայաստանի նկարիչների միության «Նկարիչ» ստեղծագործական տանը, որն իրականացվել է Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ: Այս նախագծի նպատակն է ստեղծել նոր կապեր երկու երկրների ԲՈՒՀ-երի և նկարիչների միությունների միջև, ամրապնդել երկար տարիներ ընդհատված փոխգործակցությունը: Համաժողովի շրջանակներում կայացան մի շարք հանդիպումներ, որոնցից հատկանշական են Սաֆարյանի հանդիպումը Սանկտ - Պետերբուրգի Ի.Ռեպինի անվան գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Ս. Ի. Միխայլովսկիի հետ, ինչպես նաև դասախոսական կազմի հետ քննարկվեցին փոխհամագործակցության հուշագրի հնարավորությունը:

Քննարկվել են նաև կինոսցենարների ստեղծման լաբորատորիաների համատեղ աշխատանքների հեռանկարները:

Հանդիպել և ակտիվ քննարկումներ եմ ունեցել նաև Ռուսաստանի Պախրուշինի անվան թատերական թանգարանի տնօրեն Դմիտրի Ռոդիոնովի հետ:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Պայմանավորվածություն եմ ձեռք բերել Ռուսաստանի Պախրուշինի անվան թատերական թանգարանի տնօրեն Դմիտրի Ռոդիոնովի հետ վերջինիս Հայաստան այցելելու կապակցությամբ:

Հայ-ռուսական մշակութային համագործակցության խթանում:

20.11.2019

Արայիկ Խզմալյան